յանցագործութիւն դատարանով միայն կարող է քննուել ու պատժուել:

Միաժամանակ ամենալնդարձակ լիազորութիւն է տրւում դատարանին՝ տուգանելու, ծեծելու, անգամ մահուան պատիժ կարդալու յանցագործ զինուորին կամ զինուորականին: Բայց չբաւականանալով դրանով, հեղինակը յատուկ օրէնքներով ճշդօրէն սահմանում է նաեւ այն բոլոր դէպքերը, երբ մահապատիժը կարող է գործադրուել: Ուրիշ խօսքով՝ դատաւորների հայեցողութեան համար եւս որեւէ տեղ չի թողնում նա:

Թուենք այդ դէպքերից մի քանիսը.—

1· Երբ զինուորը կամ զինուորականը, պատերազմի ժամանակ, կ'անցնի թշնամու կողմը եւ յետոյ կը բռնուի: Սակայն այդ դէպքում էլ, խմբով լինելու պարագային, մահուան պատժի ենթարկւում են միմիայն պարագլուխները, իսկ միւսները ծեծ են ուտում եւ արձակւում (նձբ):

2· Երբ զինուորը կամ զինուորականը անմեղ դերի կը սպանի (նձգ):

3· Երբ զինուորը կամ զինուորականը կը յանդգնի դէմ կենալ Ազգ. Ժողովի հրամանին (նձզ):

Միայն մի դէպքում կարծէք մահապատիժը տրւում է առանց դատարանի, վարչական կարգով եւ անմիջապէս. այն է՝ երբ պատերազմական ժամանակ եւ կռուի միջոցին զինուորը կամ զինուորականը ձեռք կը բարձրացնի իր մեծի վրայ:

Լաւ գիտակցելով զինուորութեան կարեւոր դերը երկրի պաշտպանութեան եւ ոյժի խնդրում, Շահամիրեանը աշխատում է զինուորի պաշտօնը ընդհանրապէս դրաւիչ դարձնել, մանաւանդ որ նրա ծառայութիւնը պարտադիր չէ, այլ ինքնակամ: Այդ նպատակով է անշուշտ, որ նա օրինականացնում է մարդկային հնագոյն պատմութեան մէջ կիրառուող պատերազմական սովորութիւններից մէկը՝ աւարի բաշխման սկզբունքը: Թշնամուց խլած ոսկին, արծաթը, ձին, անասունները, ցորենը, գարին, իւղը, ամէն ինչը պէտք է վաճառել հրապարակային աճուրդով եւ գոյացած դրամը բաժանել զօրքին — սկսած հանրապ. նախագահից մինչեւ յետին զինուորը, տալով իւրաքանչիւրին իր համար օրէնքով սահմանուած տոկոսը (յժա):

Դեռ աւելին. նոյն այդ նպատակով նա զօրքին իրաւունք եւ ազատութիւն է տալիս ամէն ինչ անելու թշնամուց ուժով խլուած քաղաքներում ու բերդերում, մի որոշ ժամանակով: «Զամենայն զոր ինչ խայտառակութիւն ի զինուորաց մերոց ի վերայ թշնամեաց, բնակողաց անտի(այսինքն՝ ուժով խլուած քաղաքում կամ բերդում) մի՛ մտցի ի դատաստան» — ասում է օրէնքը (նղա):

Նոյն այդ օրէնքով պիտի բացատրել նաեւ այն, որ պատերազմում սպաննուած զինուորի կինը կամ ժառանգները ստանում են աւարից զինուորի բաժինը, միւսներին հաւասար (յժբ) կամ՝ զինուորի կինը, ամուսնու սպաննուելուց յետոյ, ստանում է նրա ռոճիկի ¼-ը, մինչեւ իր մահը. միմիայն կրկին ամուսնութեան դէպքում դանձրանը ազատւում է այդ պարտաւորութիւնից (յժգ):

Պարսկաստանի, ինչպէս նաեւ եւրոպական երկրների, յատկապէս Անգլիայի, զինուորական օրէնքների ու կարգապահութեան աղեցութիւնը անժխտելի է Շահամիրեանի վրայ: Այսպէս, Շահամիրեանի զօրահաւաքութեան ամբողջ եղանակը նոյնն է, ինչ որ մինչեւ վերջին ժամանակները կիրառւում էր Պարսկաստանում: Կամ այն օրէնքը (նղդ), որի համաձայն, տասնապետից սկսած մինչեւ հանր. նախագահը, ինքն է պաշտպանում իր պատիւը եւ պատժում իրեն վիրաւորանք հասցնողին — այդ օրէնքը մի շատ սովորական երեւոյթ է եւրոպական բոլոր երկրների զինուորական կեանքում:

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵԼԵՄՈՒՏԸ

Պետութիւնը չի կարող գոյութիւն ունենալ առանց բիւդջէի: Ուստի մեր հեղինակը փորձում է սահմանել ապագայ Հայաստանի բոլոր մուտքերն ու ելքերը, մինչեւ իսկ կազմելով պետական բիւդջէի նմոյշ-նախահաշիւը:

Մի յատուկ օրէնքով ամենի առաջ վերացնում է գլխահարկը, որ արեւելեան երկրներում պետական եկամտի մի խոշոր յօդուած է կազմում: Նա վերացնում է այն նկատառու-